

**ՀԱՅԿԱՅԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՍԵՐՔ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(XIX դարի 60-ական թվականների սկզբին)**

Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

XIX դարի 60-ական թթ. սկիզբը նշանավորվում է Եվրոպայի և Մերձավոր Արևելքի քաղաքական իրավիճակի ծայրահեղ սրմամբ, հպատակ ժողովուրդների աղգային-ազատագրական շարժումների զգալի վերելքով: Հեղափոխական իրադրությունը Ռուսաստանում, գարիբալդիականների հաջողությունները Իտալիայում, լեհական ապստամբության նախապատրաստությունները, հունգարական ազատագրական շարժման վերելքը, սերբա-հունական պաշտպանական արշավանքի փորձերը, մարոնիտների ապստամբությունը Լիբանանում, Դանուբյան իշխանությունների միացումը, — ահա 1860-ական թթ. սկզբին տեղի ունեցող կամ սպասվող իրադարձությունների ամենեին էլ ոչ ամբողջական ցուցակը:

Սաստկացող լարվածությունը շերտաշերտ-թուրքական հարաբերություններում, Հերցեգովինայի ապստամբությունը և նրան հաջորդած շերտաշերտ-թուրքական պատերազմը, Բելգրադի ուժակոծումը թուրքերի կողմից, մյուս բալկանյան ժողովուրդների հետ համատեղ գործողությունների ծրագիր մշակելու Սերբական իշխանության արտաքին քաղաքականության միտումը բնորոշում են սերբ ժողովրդի վճռականությունը՝ հետևողականորեն պայքարելու թուրքական լծից հայրենիքի լիակատար ազատագրման համար: Ազգային ինքնագիտակցության աճը, լուսավորական գաղափարների թափանցումը, հարավային սլավոնների, լեհերի, հունգարացիների, իտալացիների ազատագրական պայքարը անհետևանք չմնացին Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների կյանքում: Հայտնի է, որ 60-ական թթ. սկզբին լայն ծավալ առաջացավ աբեմտահայերի սահմանադրական շարժումը, իսկ 1862 թ. Զեյթունում բռնկվեց իրենց կիսանկախ վիճակը պահպանելու համար պայքարող հայ լեռնականների հզոր ապստամբությունը:

Հարց է ծագում. կայի՞ն, արդյոք, որևէ առնչություններ հայ և սերբ ժողովուրդների ազատագրական շարժումների միջև: Այս հարցին վերաբերող տվյալները կցկտուր են և դժվար թե հնարավոր լինի խոսել երկու ազատագրական շարժումների անմիջական կապերի մասին: Սակայն հայտնի է, որ ռուս հեղափոխական դեմոկրատիայի կենտրոնը Լոնդոնում (այսպես կոչված Լոնդոնյան պրոպագանդիստները) տեղյակ էր Եվրոպայում տեղի ունեցող բոլոր իրադարձություններին, սերտ հարաբերությունների մեջ էր լեհական, իտալական, սերբական, բուլղարական, հունգարական հեղափոխական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հուլիսը ղնելով Եվրոպայում համընդհանուր հեղափոխության բռնկման և երեք բազմազգ կայսրությունների փլուզման վրա, նրանք երազում էին երբեմնի բոլոր ստրկացած ժողովուրդներին միավորված տեսնել նոր և ազատ եղբայրական ֆեդերացիայի մեջ: Ըստ որում, նրանք չէին մոռացել նաև Թուրքիայի և Ռուսաստանի միջև բաժանված հայ ժողովրդի ակնկալությունները: 1862 թ. ապրիլի 8-ին «Կոլոկոլի» (№ 128) էջերում տպագրված իր «Մի քանի խոսք հարավային սլավոններին» ուղերձում Բակունինը, դիմելով թուրքական և ավստրիական լծի տակ տառապող սլավոններին, հարց էր տալիս. «Ձեզ դաշնակիցներ են հարկավոր Զեռք մեկնեք ձեր հարևաններին՝ ռումիներին, հայերին, որոնք այժմ նույնպես ապստամբել են իրենց անկախության համար, նույնիսկ հույներին, որոնց պահպանելու համար նկրտումները բոլորովին էլ սարսափելի չեն»: 1862 թ. մայիսի 10-ին Բակունինը գրում էր Գարիբալդիին. «Որ-

տեղի¹ ց է սկսելու շարժումը: Կահազանգե²ն, արդյոք, որպես ազդանշան Ֆրանսիայի փառասիրությունը կամ նրա ներքին հանգամանքները: Արդյոք դա լինելու է իտալացի, հունգարացի, սլավոն, հայ կամ հուլյն ժողովուրդների անսպասելի ապստամբություն: Լինելու է դա, այնուամենայնիվ, ռուսական հեղափոխություն: Ահա այս է խնդիրը: Համենայն դեպս, բոլոր ջանքերը գործադրենք, որպեսզի այս ապստամբությունները նպաստեն և հասնեն մեկ գլխավոր նպատակի իրագործմանը՝ Իտալիայի լիակատար ազատագրում, ողջ Արևելքի ապստամբություն և ազատագրում: Պետք չեն Ավստրիան և գերմանական տիրապետությունը, սակայն, միաժամանակ պետք չէ ցարիզմը և կայսրությունը Ռուսաստանում: Այս բոլորի փոխարեն՝ բոլոր ազատ ժողովուրդների ինքնավարություն և ֆեդերացիա³: Այսպիսով, ռուս հեղափոխական դեմոկրատները միավորում էին բոլոր ազատագրական շարժումները, բոլոր տանջված ժողովուրդների միասնության մեջ էին տեսնում արդարության հաղթանակը:

Հայ ժողովրդի ազատագրական շարժումը եվրոպական նույնանման շարժումների հետ կապելու ձգտումը առավել ցայտուն կերպով արտահայտվեց Միքայել Նալբանդյանի գործունեության և ստեղծագործության մեջ: Նա և նրա գործակիցները սերտ կապեր էին հաստատել «ռուս պրոպագանդիստների», Գարիբալդիի, Մաձձինիի, լեհ վտարանդիների (Չարտորիսկի) հետ: 1862 թ. մայիսի 6-ին Բակունինը Լոնդոնից նամակ է ուղարկում Նալբանդյանին, որն այն ժամանակ գտնվում էր Փարիզում: Նամակի վերջում գետնի վրա էր ծածկագրված նամակագրության բանալին՝ մի շարք անձնանուններ և տեղանուններ իրենց գաղտնագրերով: Ուշագրավ է, որ այդ ցուցակում հայերի, ռուսների, լեհերի, հուլյների, թուրքերի ծածկագրերից բացի, տեղ է գտել նաև «սլավոններ-գերմանացիներ» տարբերակը⁴: Անկասկած, Բակունինը նկատի ուներ հենց հարավային սլավոններին: Իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ Նալբանդյանը, քննադատելով «եվրոպական հավասարակշռության» սկզբունքը, որն արդարացնում էր գաղութային ճնշումը և ուրիշ երկրների բռնի զավթումները, դատապարտելով «քաղաքակրթություն տարածող» մեծ տերությունների շահագիտական նպատակները, հեզանքով գրում էր. «Ավստրիան, յուր 8 միլիոն ձկնարյուն ավստրիացիներով բռնացել է Լոմբարդիո վերա և չէ կամենում վենետիկը ձեռքից թողնուլ:—Քաղաքակրթություն է տարածում:—Մորթել է Հունգարիան, խեղդել է Գալիցիան, Դալմատիան, Բոհեմիան և այլ գավառներ ու ազգեր:—Քաղաքակրթություն է տարածում:—...—Եվրոպական տերությունները անդադար օգնություն են տալիս Թուրքիային, որ նա դիմանա և չկործանվի:—Որպեսզի Թուրքիո ստրկացած հայ, սլավոն և հուլյն ժողովուրդը քաղաքակրթիչ հոգարարովից չզրկվի:—Կուրանով Ավետարանի որդի՞ք քաղաքակրթել:—Այդ քաղաքակրթությունը ավելի փրկարար է: Ավետարանից թերևս ազատություն կարող է ծագել, իսկ Կուրանից և այդ երկյուղը չկա»⁵:

Կասկած չկա, որ Նալբանդյանը տեղյակ էր եվրոպայի բոլոր հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումներին, այդ թվում նաև՝ թուրքական ատեիլ լծի դեմ սերբ ժողովրդի պայքարին: Հնարավոր է, որ նա կամ էլ նրա զինակիցները հաստատել էին կամ փորձում էին կապեր հաստատել սերբ ազգային գործիչների հետ: Ցավոք, մեզ ցայսօր չի հաջողվել նման փաստեր հայտնաբերել ո՛չ հայկական, ո՛չ էլ սերբական աղբյուրներում: Բացառություն է կազմում միայն 1866 թ. օգոստոսին վերաբերող և վերջերս հրապարակված մի վավերագիր: Յովան Ռիստիչը⁶ Կոստանդնուպոլսից նա-

¹ М. Лемке, Очерки освободительных движений шестидесятих годов. СПб. 1908, с. 87.

² Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 5, Երևան, 1984, էջ 349:

³ Նույն տեղում, հ. 4, 1983, էջ 87—88:

⁴ Րիստիչ Յովան (1831—1899)—քաղաքական գործիչ, Սերբիայի արտաքին գործերի նախագահ, պատմաբան:

մակով հայտնում է իլիա Գարաշանինին՝ սերբերի կողմից հայ առևտրական, ամերիկյան հպատակ Ազարյանի միջնորդությամբ «հենրի» մականիշի ամերիկյան հրացաններ ձեռք բերելու հնարավորության մասին⁵։ Ազարյանը համաձայնվեց զենքը սերբերին վաճառել ավելի էժան գնով, քան թուրքերին։ Սակայն տվյալ դեպքում խոսքը գնում էր ոչ թե հայրենասիրական զգացմունքներով համակված հայի կողմից սերբերին գիտակցաբար օգնություն ցույց տալու մասին, այլ ամենից հավանականն է, որ դա փոխադարձ շահավետ առևտրական գործարք էր։

Անհամեմատ ավելի լայն և անմիջական արձագանք ստացավ XIX դարի 60-ական թթ. սկզբի սերբերի և չերնոգորցիների աղգային-ազատագրական պայքարը հայ պարբերական մամուլի էջերում։ Հայ պատմաբանները բավականաչափ սպառնալիք և մանրամասն են ուսումնասիրել հայ պարբերական մամուլում հրապարակված նյութերը 1875—78 թթ. Սերբիայի, Բոսնիայի և Բուլղարիայի իրադարձությունների վերաբերյալ։ Նշվում է հայ հասարակական գործիչների շահագրգռվածությունը՝ ուղևորական պատերազմում հարավային սլավոնների համար բարեհաջող ելքի կապակցությամբ, նրանց լիակատար աջակցությունն ու համակրանքը այն ժողովուրդների հանդեպ, որոնք պայքարում էին թուրքական լծի դեմ և իրենց պայքարով մատնանշում այն ճանապարհը, որին պետք է հետևել և շուտով հետևեց Արևմտյան Հայաստանում նույն լծի տակ գտնվող հայ ժողովուրդը։ Միաժամանակ այդ աշխատություններից այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե բալկանյան ժողովուրդների աղգային-ազատագրական շարժումներին հայ պարբերականները սկսել են անդրադառնալ միայն 1870-ական թթ. կեսին։ Իրոք որ, անցյալ դարի 70-ական թթ. վերջին և հետագա տարիներին «բալկանյան» թեման տառացիորեն «գրավել» էր հայկական մամուլի էջերը։ Սակայն թերթերով միայն 1860-ական թթ. սկզբի թերթերն ու ամսագրերը, համոզվում ենք, որ այդ տարիներին նույնպես հերցեգովինյան ապստամբության, չերնոգորա-թուրքական պատերազմի, Բելգրադի ուժակոծության մասին հաղորդագրությունները կազմում են արտաքին տեսությունների շոշափնյի մասը, գրանցում աներկմտորեն երևում է, թե հայերը ում են հավակրում և ում օրինակին պետք է հետևեն։

1861—1863 թթ. լույս էին տեսնում տարբեր ուղղությունների 35 անուն հայ պարբերականներ։ Նրանց մեծամասնությունը կարճատև կյանք ունեցավ։ Պարբերականների երեք քառորդը կազմում էին Օսմանյան կայսրության տարածքում, հիմնականում Պոլսում և Զմյուռնիայում, հրատարակվող լրագրերն ու հանդեսները։ Քանի որ նրանք գտնվում էին թուրքական իշխանությունների հսկողության տակ և արգելքի սպառնալիքի պատճառով չէին կարող հակադրվել պաշտոնական քաղաքականությանը, հետևաբար իզուր է արևմտահայ նույնիսկ ամենաառաջդեմ հանդեսներից որևէ մեկի էջերում, ինչպիսին էր մասնավորապես Հ. Սվաճյանի «Մեղուն», թուրքական փտած վարչակարգի դեմ սերբերի պայքարին վերաբերող որևէ հիշատակում գտնել։ Միայն «Արշալույս Արարատյանը» իր էջերում բալկանյան իրադարձությունների մասին մի քանի հաղորդագրություններ զետեղեց։ Այդ լրագրի իսկական դեմքը բացահայտելու նպատակով մեջ բերենք միայն մի քանի դիտարկումներ՝ ցույց տալու համար, որ չերնոգորա-թուրքական պատերազմի ողջ ընթացքը այստեղ ներկայացվում էր որպես թուրքական զորքի հաղթական արշավանք։ Այսպես, 1862 թ. մայիսի 5-ի համարում Պոլսից տրվող մի հաղորդագրության մեջ ասվում էր. «Գարատաղի գործերը մի և նույն վիճակի մեջ կգտնվին. այսինքն օսմանյան զորքը քանի մը հաղթություններ ընել են տե, բարձրապատիվ Սերտարի էքրեմ էոմեր փաշան յուր զինվորական գոր-

⁵ Գարաշանին իլիա (1812—1874)—ականավոր քաղաքական գործիչ, նախարարական խորհրդի նախագահ։

⁶ Србија и ослободилаки покрети на Балкану од Париског мира до Берлинског конгреса (1856—1878). Кн. 1, 1856—1866. Београд, 1983, с. 471—472.

ծողությունները առժամանակյա կերպով դադարեցուց, իսկ որում նվիրակի մեծ տերությունները բարեկամաբար միջամտեց ըլլալով այս գործոց, կաշխատին խողաղասիրական միջոցներով կարգադրել Օսմանյան տերության և Գարատաղի մեջ պատահած տարաձայնությունները, որոնց պատճառը ուրիշ բան չէր այց միայն հիշյալ լեռան բնակչաց ապօրինավոր և բարբարոսական ընթացքը: Նույն տարվա հուլիսի 28-ին լրագիրը գրում էր, որ «Գարատաղի մեջ օսմանյան զորքը հաղթական քայլերով միշտ հառաչ կերթան, ուստի տարակույս չկա թե այս երկրին տիրող իշխանը վերջապես պիտի ստիպվի Բարձրագույն Դռան օրինավոր առաջարկությունները ընդունելով հաշտություն և նեղողություն խնդրել»⁷: Մեր կարծիքով, մեկնաբանությունները ավելորդ են:

Թուրք նվաճողների դեմ սերբերի և շերնոգորցիների անձնուրաց պայքարը առավել ցայտուն կերպով արտացոլվել է արևելահայ մամուլում, ինչպես նաև «Փարիզ» շաբաթաթերթում: Բնավ էլ պատահական չէ, որ ռուսահայ մամուլը լայնորեն էր լուսաբանում բալկանյան իրադարձությունները: Ռուս հասարակայնությունը անկեղծ կարեկցանքով և լարված ուշադրությամբ էր հետևում Բալկաններում կատարվող դեպքերի զարգացման ընթացքին. բոլոր ռուսական լրագրերն ու հանդեսները առանց բացառության լի էին Սերբիայից և Չերնոգորիայից ստացած հաղորդագրություններով, եղբայրական սլավոնական ժողովուրդների մասին մանրամասն պատմական, ազգագրական, բաղաբական տեղեկություններով: Ռուսաստանի հայալեզու պարբերական մամուլի մեջ այդ նյութերը թափանցում էին գերազանցապես ռուսական աղբյուրներից, ինչը, բնականաբար, իր կնիքն էր դնում նրանց ուղղվածության վրա: Սրանից բացի, հայկական լրագրերում հրապարակվում էին արևմտյան գործակալությունների և լրագիրների այն հաղորդագրությունները, որոնք նախապես տպագրվում էին ռուսական մամուլում: Իհարկե, ինֆորմացիոն տեսակետից դա դժգոհություն նվազեցնում էր հայերեն հրապարակումների լիարժեքը: Մեզ համար, սակայն, շատ ավելի կարևոր է հարցի մյուս կողմը՝ Բե ինֆորմացիայի այդ հեղեղից ի՞նչ էին իրենց լրագրերի համար առանձնացնում հայ քաղաքական տեսարանները, ինչպե՞ս էր արտացոլվում բալկանյան թեման հայ տարբերական մամուլի էջերում: Քանի որ մինչև 1860-ական թթ. հայ պարբերական մամուլում սերբերը և շերնոգորցիները գրեթե չէին հիշատակվում, անհրաժեշտ էր առաջին հերթին հայ ընթերցողներին ծանոթացնել այդ երկրների և ժողովուրդների հետ, տալ նրանց մասին ամենատարրական տեղեկություններ:

1861 թ. օգոստոսի 15-ին Թեոդոսիայում արքեպիսկոպոս Գաբրիել Այվազյանի խմբագրությամբ լույս տեսնող «Մասյաց Աղավնի» պատկերազարդ հանդեսում գետնից էր «նվիրակական Տաճկաստանի բնակիչները. Սերվիա» ակնարկը, Բելգրադի փորագրանկարով⁸: Դեռևս մարտյան համարներից մեկում հանդեսում տեղ էր գտել մի հաղորդագրություն այն մասին, որ «նվիրակական Տաճկաստանի այլ և այլ ժողովրդոց մեջ ծագած շարժումները օրեօր ավելնալու վրա են: Պոսնացիք, բուլղարք, սերվիացիք, մոլտավիացիք, վլահք և գարատաղցիք հետ զհետե իրարու հետ միաբանելով՝ օսմանյան տերության հպատակութենեն բոլորովին ելլելու կպատրաստվին»⁹: «Սերվիա» ակնարկը գրվել է ֆրանսիացի աշխարհագրագետ Լեթեի ռուսամասիրության հիման վրա: «Սերբերը նվիրակական Տաճկաստանի քաջ ժողովուրդներն են մեկն են, համալսելով հունադավան,—գրում էր հանդեսը—Սոքա մինչև գարուն սկիզբը օսմանցոց հպատակ էին, բայց 1801-ին Չերնի Գեորգ անունով իշխանը ոտս ելավ ու 18 տարի խռովություն հանեց, մինչև որ Միլոշ իշխանը տիրեց երկրին և 1826-ին բոլորովին ազատ ըրավ Սերվիան օսմանցվոց իշ-

⁷ «Արշալույս Արարության», 1862, № 674:

⁸ Նույն տեղում, № 680:

⁹ «Մասյաց Աղավնի», 1861, № 16, էջ 187—188:

¹⁰ Նույն տեղում, № 5, էջ 38:

խանութենեն, Այժմ միայն տուրք կուտան Սերվիացիք օսմանցվոց, և իրենք կհամրվեն Ռուսաց և Ավստրիացվոց պաշտպանությանը տակ»¹¹, Ապա թվարկվում են Սերբիայի խոշորագույն քաղաքները (Բելգրադ, Ամեդերևո, Կրագուևաց, Նիշ և Նովիպադար), որին հաջորդում է Բելգրադի համառոտ նկարագրությունը. «Պեկրատ օսմանցվոց պատմությանը մեջ շատ անվանի է, վասն զի քանի մը անգամ անոնց ձեռքը անցեր ու նորեն հտ առնվեր է և մեծամեծ պատերազմներով ու երկար պաշարմունքներով»¹², 1862 թ. հուլիսին Բելգրադի ուժեղացման կապակցությամբ նույն հանդեսում փորագրանկարով հանդերձ լույս տեսավ բելգրադյան բերդի մանրամասն նկարագրությունը, որտեղ հատուկ ընդգծվում էր բերդի կարևոր ռազմավարական նշանակությունը. «Հունիս ամսույն քաղաքական դիպվածներուն մեջ նշանավոր բան եղավ՝ օսմանցվոց Պեկրատին բերդեն զքաղաքը ուժեղացնելը, որով եվրոպական Տաճկաստանի պատերազմը կրնա ավելի սաստիկ բորբոքիլ ու մեծամեծ հետևանքներ ունենալ: Քաղաքին մեջ տաճկաց զինվորները սերվացի տղա մը մեռուցին. անոր վրա արյունահեղ կռիվ մը բացվեցավ, որ բոլոր գիշերը տևեց, շատ դռներ կոտորվեցան և սոսկալի անկարգություններ եղան. Սերվիո տերությունը օտարազգի հյուպատոսներուն օգնությամբը հազիվ կրցավ խաղաղություն ընել, որով օսմանցվոց զորքը եկավ քաղաքեն ու միջնաբերդը քաշվեցավ, հետո տեսնելով որ քաղաքացիք պատերազմի կպատրաստվին՝ ուժեղացնեցին քաղաքը: ...Այժմ բերդը պաշարմանն ազատելը շատ դժվար է, որովհետև Պեկրատը օսմանյան սահմանեն բավական հեռավորություն ունի: Վերջին ելքատրագիր մը կըսեր թե սերվացիք կամ սերբերը հարձակեր են բերդին վրա, և կատաղի արյունահեղությամբ տիրեր են: Բայց այս լուրը կգրեմք առանց հաստատելու»¹³:

Բալկանյան իրադարձություններին նվիրված նյութերի առատությամբ 1860-ական թթ. սկզբին հատկապես առանձնանում է «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը, որն այդ ժամանակաշրջանի արևելահայերի միակ քաղաքական-հասարակական լրագիրն էր: Սերբիայի, Հերցեգովինայի, Զեքոդորիայի անցքերը լուսաբանելիս թերթը որոշակի դիրք էր գրավում. անմիջապես աչքի են ընկնում հարավային սլավոնների ազատագրական շարժումների հանդեպ համակրանքը և թուրքական իշխանությունների մերկացումը: Այնուամենայնիվ, այդպիսի դիրքորոշումը որոշ չափով թելադրված էր նաև ռուսական պաշտոնական մամուլի ուղղվածությամբ, որն այն տարիներին համակրանքով և բարյացակամությամբ էր վերաբերվում «ճնշված արյունակից եղբայրներին»: Միջազգային կյանքի բոլոր նորությունները ընդհանրացվում էին «Քաղաքական տեսություն» խորագրի տակ, որը մշտապես վարում էր Միքայել Պատկանյանը (1814—1895), հետագայում հայ ազգային թատերական արվեստի հիմնադիրներից մեկը:

Հաղորդագրությունները «Քաղաքական տեսություն» համար հիմնականում քաղվում էին «Кавказ», «Северная почта» և «Северная пчела» ռուսական լրագրերից, որոնք էլ իրենց հերթին արտատպվում էին ամենատարբեր եվրոպական պարբերականներից: Որպես կանոն, սկզբնական հաղորդագրության և հայկական լրագրում նրա հրապարակվելու միջև ընկած ժամանակամիջոցը առնվազն տաս օր էր: Միաժամանակ Մ. Պատկանյանը ջանում էր այս իրադարձությունները հայ ընթերցողներին ներկայացնել հնարավորին չափով ամբողջականորեն, այնպես որ շատ հաճախ ամբողջ քաղաքական տեսությունը (լրագրի կեսը) նվիրված էր լինում բալկանյան դեպքերին: Հայ իրականության մեջ սկսվող ազգային շարժման վերելքի տարիներին այսպիսի շահագրգռվածությունը պատահական չէր: Ի հաստատումն մեր այս մտքի բերենք 1863 թ. առաջին համարում հրապարակված «Եվրոպայի քաղաքականության վիճակը ներկայումս» խմբագրականը, որտեղ

¹¹ Նույն տեղում, № 16, էջ 187:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, 1862, № 13, էջ 146:

ապում էր. «Ինչպես իր հայտարարությունումն էլ խոստացած է, «Մեղու Հայաստանին» իր քաղաքական մասնի մեջ կհաղորդե մեր ազգայիններին տեղեկություններ միայն այն նշանավոր և մեծ խնդիրների վերա, որոնք առանձնապես դրավում են Եվրոպայի տերությունների քաղաքական ուշադրությունը, ու որոնք առավելապես վերաբերում են արևելյան խնդրին, մյուս մասը անցքերը ու դեպքերը բաց թողնելով, որովհետև սոքա անհասկանալի կլինին մեր ազգայնոց մեծ մասին, այլ սորա փոխարեն խոստանում է «Մեղուն» ծանոթացնել նրանց Եվրոպացոց ազգերի վիճակը»¹⁴:

Հետաքրքրական է, որ Հերցեգովինայից և Չերնոգորիայից ստացած հաղորդագրությունների հետ մեկտեղ 1861 թ. մայիսին լրագրում զետեղվել էր «Северная пчела»-ից Սարգիս Հովհաննիսյանի թարգմանած «Իսլամիզմը Եվրոպայում և Թուրքիայի ներկա դրությունը ընդհանրապես» խմբագրական հոդվածը¹⁵: Հոդվածի հեղինակը այն միտքն էր արտահայտում, որ հպատակ ժողովուրդների ազատ զարգացմանը արգելք հանդիսացող Օսմանյան կայսրությունը պետք է քայքայվի, նրա տեղում կստեղծվի այդ ժողովուրդների կոնֆեդերացիա, իսկ Թուրքերին ընդհանրապես անհրաժեշտ է վտարել Եվրոպայից. «Ի՞նչ իրավունքով տաճկաց փոքրիկ և աներևելի ազգը տիրապետում է այնպիսի մի ամենամեծ կողմի վրա: Արդյոք թրի բերանի իրավունքով: Ախր այդ փոքրամթիվ ազգը չգիտե և բռնել Թուրքը, ախր Եվրոպան պարտավորվում է նրա թուր բռնած ձեռն էլ շարժեցնել ինքն: Շատ ժամանակ է արդյոք որ գաղղիացիք և անգղիացիք թափեցին յուր որդկերանց արյունը օսմանցվոց ցեղի համար: Տաճկաստան կենդանի է այն՝ նրան չի դիպչելի դրած պայմանի շնորհքովը, որով հավասարել են նրան Եվրոպայի գլխավոր տերությունները: Եթե սրանք ինչ ձեռք վեր առնեն Տաճկաց տերությունից, իսկույն նա կփշրվի մատը դպչելուց էլ: Բայց հարցնում ենք՝ թե ո՞վ վեր կկենա նրա տեղ, զի հիմարություն է թողնել այնպես ինչպես կա և նոր կտրտելն, կարկատելն էլ անկարելի է»: Այսպիսի գաղափարներ ժամանակ առ ժամանակ երևան էին գալիս դիվանագիտական շրջաններում և առանձին հասարակական գործիչների ելույթներում, սակայն, ավելի կարեւոր է այն հանգամանքը, որ այս հոդվածը թարգմանելով, «Մեղվի» խմբագրությունը միանշանակորեն դրսևորեց իր վերաբերմունքը Արևելյան հարցի և հայ ժողովրդի ճակատագիրը բաժանող ազգերի առնչությամբ: Իսկ եթե հաշվի առնենք, որ նույն հոդվածի շարադրանքը «Քանի մի խոսք Տաճկաստանի ապագա վիճակի վրա» վերնագրով լույս տեսավ նաև «Ճռաքաղ» հանդեսում՝ նրա խմբագիր Զարմայր Մսերյանցի թարգմանությամբ¹⁶, ապա կարելի է ենթադրել, որ արդեն 1860-ական թթ. հայ հասարակության տարրիկ խավերին միավորում էր Օսմանյան կայսրության մոտալուտ քայքայման գոնն հույսը:

«Փարիզ» երկշաբաթաթերթի առավելությունը «Մեղու Հայաստանի» համեմատությամբ այն էր, որ հաղորդագրությունները Սերբիայից քաղվում էին անմիջաբար Ֆրանսիական և գերմանական լրագրերից, շանցնելով ռուսական «գտիչի» միջով: Սակայն եթե սկզբնական շրջանում «Փարիզը» ակտիվորեն տեղյակ էր դարձնում իր ընթերցողներին բալկանյան իրադարձությունների մասին, ապա 1861 թ. վերջերից լրագիրը այլևս չէր անդրադառնում այդ նյութին:

Առաջին տեղեկությունները հայ պարբերական մամուլում հերցեգովինյան ապստամբության վերաբերյալ երևան են գալիս 1861 թ. հունվարին: Նախ «Փարիզում»¹⁷ և ապա «Մեղու Հայաստանի»-ում¹⁸ խոսվում էր պիվա, դրոբնյացի և բանյանի ցեղերի ապստամբության և Չերնոգորիային միավոր-

¹⁴ «Մեղու Հայաստանի» 1863, № 1, էջ 3:

¹⁵ Նույն տեղում, 1861, № 19, էջ 148—149; Северная пчела, 1861, № 33, с. 1

¹⁶ «Ճռաքաղ», 1861, № 18, էջ 282—284:

¹⁷ «Փարիզ», 1861, № 37, էջ 2:

¹⁸ «Մեղու Հայաստանի», 1861, № 5:

վելու նրանց ձգտման մասին: Նույն համարում «Մեղուն» հաղորդում էր նաև Սպուտի մոտ շերնոգորցիների փայլուն հաղթանակի մասին: Հունվարի 18-ին «Փարիզը», վկայակոչելով «Օփինյոն նասյոնալ» լրագիրը, գրում էր, որ «Դադմատիո, Գարատաղի, Պոսնայի ու Սերվիո մեջ, ինչպես նաև Թրանսիլվանիո ու Հունգարիո մեջ ամեն տեղ Կարիպալտի ու յուր կարմիր շապիկներուն կապասվի: Ուրեմն այս երկիրներուն մեջ սոսկալի հեղափոխություն մը կրնա սպասվի»¹⁹, 1861 թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներից «Մեղու Հայաստանին» կանոնավոր տեղեկություններ է տալիս ամբողջ Հերցեգովինայում ապստամբության տարածվելու²⁰, միջազգային հանձնաժողովի և Օմեր-փաշայի հայտարարության (պրոկլամացիայի)²¹, Օմեր-փաշայի և Չերնոգորիայի իշխան Նիկոլայի միջև հարաբերություններ հաստատելու փորձերի մասին²²: «Փարիզը» 1861 թ. սեպտեմբերի 13-ին հրապարակում է քաղվածքներ Նիկոլայ իշխանի դիմումից՝ ուղղված մեծ տերությունների դեսպաններին, որտեղ նա բողոքում էր Չերնոգորիայի շրջափակման դեմ, որը կազմակերպել էր Թուրքիան²³: Սեպտեմբերի վերջին համարներում «Մեղու Հայաստանին» շարադրում է իշխանի կողմից Բ. Դաանը ներկայացված վերջնագիրը²⁴, իսկ սեպտեմբերի 23-ին լրագիրը գետնդնում է Սերբիայի և Չերնոգորիայի արտաքին քաղաքական ծրագրերի ընդարձակ տեսությունը. «Ամենից ավելի վսեմ ընդդիմությունը սուլթանի ինքնակալության համար առաջ են գալիս Սերբիումը և Ղարադաղումը, որոց վիճակը օրոքսօրե դառնում է ավելի էներգիքական: Սերբիումը կառավարչությունը կրկնապատկում է իր ճիգը տաճկաց ազդեցության տակից դուրս գալու համար: Պակաս մտադրության չէ արժանի կնյազ Միքայելի հայտարարությունը, որով խոստանում է ընդունել բոլոր Տաճկաստանի երկրներից աջսորած քրիստոնյաներին: Հեշտ է երևակայել, թե ինչ նշանակություն կունենա Սերբիան Տաճկաստանու քրիստոնեից աչքումը, եթե մեկ անգամ կհաշվեն, թե կարող են նրա սահմաններում գտնել ապաստարան և պաշտպանություն: ...Ավելի մեծ հաստատություն է երևում Ղարադաղեցոց մեջ: Կնյազ Նիկոլայը արդեն չի բավականանում հասարակ բողոքով: Նա ուղղակի առաջարկում է պայմաններ, որոնց հիման վրա խոստանում է դնել իրա ազդեցությունը Հերցեգովինայի հաշտության համար»²⁵:

1862 թ., երբ ապստամբությունը ավելի է հզորանում և ակտիվանում է Չերնոգորիայի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ, հաղորդագրությունները ապստամբության մասին բռնում են լրագրի ամբողջ քաղաքական տեսությունը: Հետաքրքրական է նյութերի դասավորումը: Նախ գետնդնված է Վիեննայի թուրքական դեսպան Քալիմակիի պաշտոնական հաղորդագրությունը՝ Օմեր-փաշայի խոշոր հաղթանակների, թուրքերի նվազ կորուստների, չերնոգորցիների ջախջախման մասին և այլն (այդպիսի եզրույթները թուրքերը դիմամբ խցկում էին եվրոպական մամուլ), իսկ դրանից հետո տպագրված են բազմաթիվ հաղորդագրություններ, որոնք ամբողջապես հերքում են թուրքական դեսպանի կեղծիքները և ընդհակառակն, վկայում ապստամբների հաջողությունների և թուրքերի ծանր կորուստների մասին:

Այսպես, օրինակ, լրագրի մայիսյան համարներում, որտեղ խոսվում է չերնոգորա-թուրքական պատերազմի սկզբի, Նիկշիչ բերդը տանող ճանապարհին գտնվող Դուգա կիրճում Դերվիշ-փաշայի զորքի կրկնակի ջախջախման, Նիկշիչ բերդի առանց մասին և այլն, տարբեր աղբյուրներ տալիս են

19 «Փարիզը», 1861, № 38:

20 «Մեղու Հայաստանին», 1861, №№ 15, 16, 19:

21 Նույն տեղում, №№ 21, 23, 26:

22 Նույն տեղում, №№ 33, 35:

23 «Փարիզը», 1861, № 54:

24 «Մեղու Հայաստանին», 1861, № 38, 39:

25 Նույն տեղում, № 39, էջ 308—309:

այնքան հակասական, հակադիր և խեղաթյուրված տեղեկություններ, որ անհնարին է հասկանալ, թե իրականում ինչ էր կատարվում Չերնոգորիայում²⁶։ «Մասյաց Աղալնի» հանդեսի հունիսի 1-ի համարում այս կապակցությամբ արտաքին տեսություն մեջ դրված է, որ «Օսմանյան տերության համար մեծ գործ բացված է այժմ եվրոպական Տաճկաստանին մեջ՝ սլավյան ժողովրդոց հետզհետե ոտք ելնելուն պատճառով. և թեպետ ավստրիական օրագիրները կշանան այնպես հասկանել եվրոպացվոց, որ իբր թե հաղթվողները միշտ զարատաղցիք ու Հերսեկի բնակիչներն են, բայց իրոք հայտնի է, որ օսմանցվոց սպարապետ Օմեր փաշան քանի մը անգամ մեծամեծ կոտորածներով ետ քշվեր է նոցա առջևը։ Այժմ վտանգը ևս առավել պիտի սաստկանա՝ եթե սրֆերն ևս հայտնապես միաբանին Գարատաղու բնակչաց հետ»²⁷։ «Մեղու Հայաստանին» զետեղել էր ընդարձակ հաղորդագրություն փարիզյան «Նորդ» լրագրից, որի մեջ խոսվում էր Չերնոգորիայում կատարվող իրադարձությունների վերաբերյալ ճշմարիտ ինֆորմացիա հաղորդելու դժվարությունների մասին, թուրքական լրատվական միջոցների և պաշտոնական անձանց կողմից եվրոպական հասարակական կարծիքը մոլորության մեջ զցնելու փորձերի մասին։ Հաղորդագրության մեջ ընդգծվում է, որ հերցեգովինների պատամբությունը և շերնոգորցիների պատերազմելը թուրքիայի դեմ՝ հարավսլավոնական ժողովուրդների ազատասիրական ձգտումների դրսևորումներն են, և ոչ թե զինված ելուզակների ավազակություններ և վայրագություններ, ինչպես դա ջանում էին ներկայացնել թուրքական դեսպանը Ավստրիայում և նրա նմանները։ «Հերցեգովինի բնակչաց շարժումները և նրանցից առաջ եկած տեղական անցքերը միայն նախազգուշության միջոցներ են և արհամարիք մեծ պատերազմի, որ պատրաստվում է։ Դուռը կարող է դեռ առաջըր առնուլ կամ գոնյա հետաձգել և նվազեցնել նրա վտանգները և հետևանքը։ Բայց նա չի հասնիլ էդ նպատակին հարձակվելով Ղաթաղաղու վրա և ընդհանրապես ավերելով երկիրները։ Տաճկաստանը պարտքի տակում է, և նրա կենդանացնողը տաճիկները չեն (որք հեռու են մնացած վաճառականությունից և մարդկության ամենատեսակ առաջադիմություններից), այլ քրիստոնյա ազգերն են, որք սկսել են կարգալ, գրել և հաշվել (ի թիվս այլոց, իրանց զորությունն էլ)»²⁸։ Դժվար չէ պատկերացնել, թե որքանով էին մոտ այս տողերը հայ ընթերցողների զգացմունքներին։

Սկսած հունիսից, Հերցեգովինայից և Չերնոգորիայից հաղորդագրությունների հետ միաժամանակ, լրագիրը լայնորեն լուսաբանում էր նաև Բելգրադում և Սերբիայում ստեղծված լարված իրադրությունը. Բելգրադի բերդի թուրքական կայազորի ընդհարումները սերբ բնակչության և միլիցիայի հետ, Բելգրադի բարբարոսական ուժերի մարտերը, սերբերի պահանջը՝ Սերբիայի լիակատար անկախություն տրամադրել, մեծ տերությունների կոստանդնուպոլսյան կոնֆերանսը²⁹։ Հերցեգովինայի պատամբության և շերնոգորա-թուրքական պատերազմի վերաբերյալ վերջին հաղորդագրությունները³⁰ անմխիթարական էին. թուրքական զորքերի սրընթաց հարձակումը Ցետինյեի վրա սպառնում էր առետ դառնալ Չերնոգորիայի համար։ Միայն Ռուսաստանի միջամտության շնորհիվ հնարավոր եղավ հաշտություն կնքել և հետագայում ձեռնամուխ լինել Չերնոգորիայի համար ծայր աստիճան անբարենպաստ հաշտության պայմանագրի վերանայմանը։ Այս տագնապալի լուրերի հետ մեկտեղ սեպտեմբերի 8-ից սկսած (№ 37), «Մեղու Հայաստանին» կանոնավոր կերպով հաղորդում էր նաև Օսմանյան կայսրության դեմ ելած Չեչենի հերոսական ապստամբների մասին, որոնք անհավասար մարտի բռնվեցին թուրք կեղծքիչների դեմ։

²⁶ Նույն տեղում, 1862, № 18—23։

²⁷ «Մասյաց Աղալնի», 1862, № 11, էջ 128։

²⁸ «Մեղու Հայաստանին», 1862, № 24, էջ 93։

²⁹ Նույն տեղում, № 26—28, 31—35։

³⁰ Նույն տեղում, № 36—38, 42—44։

Հատկանշական է, որ այդ ժամանակաշրջանի հայ պարբերական մամուլը զեյթունցիներին հաճախ ամենատուր չէր ընդնդորցիներին հետ: Ի դեպ, հենց իրենք՝ հայ ապստամբները, կոչում էին իրենց հայրենիքը «Հայկական Չերնոգորիա»³¹: 1864 թ. հուլիսի 1-ին հրատարակվում էր «Կատկանյանի խմբագրությամբ լույս տեսնող «Հյուսիս» լրագրում հրատարակվել էր ֆրանսիացի պատմաբան, աշխարհագրագետ, լեզվաբան Վիկտոր Լանգուայի (1829—1869) ուղեգրության թարգմանությունը: Լանգուայն, որը 1860 թ. այցելել էր Կիլիկիա և Ջեյթուն, իր ուղեգրության սկզբում նշում էր, որ եվրոպացիները պարտավոր են ավելի բարձր ուշադրություն ցուցաբերել այն փոքրիկ կիսաբնակա սերոնյունների նշանամբ, որոնք ձևականորեն ստեղծում են Սասանյան և յուրության կազմի սեղ, սակայն իրենց հեռավորության կամ անմատչելիության պատճառով «մնայել են սուլթանի իշխանության»³² ղուրս: Մեծ մասամբ քրիստոնյաներով բնակեցված, Կրանք կղզիներ ին մուսուլմանական ծովում: «Եվրոպայումը Սև Սարը (Ղարադաղ, Չերնոգորիա), որ այսօրան երկար ժամանակ ընդդիմանում էր էոմեր փաշա Սերդարի զորքին, Փոքր Ասիայումը՝ Ջեյթունը, որո բնակիչը վեց ամիս առաջ՝ Սարաշեն՝ նրանց բնաջնջ անելու համար բերած մյուսումնաներու բանակը վանելիս ու փախցրին, Ասորիքումը՝ Լիբանան (Տյուրդիվ Տաղը), որ մեկ ժամանակ եղել էր զարհուրելի կոտորածի տեսարան, վերջապես՝ Տաճկաց բաժին Հայաստանի մեջ Սասուն սարերը, որո բնակիչը են չնվաճված հայեր:

Այս ամեն կիսագգերը՝ որոնց որ Սամանցոց Տերությունը ջանք է անում հնազանդեցնել իրան, ուղարկելով նոցա վերա արշավանքներ անելու մասքով՝ շատ ասպատակ զորքեր, դատապարտված են արդեն ի կորուստ, ելն եվրոպական տերությունները նրանց օգնություն և ձեռնտվություն չանեն»³³:

Չերնոգորիա-Ջեյթուն զուգահեռ արևացովում էր ուսե այլ կերպով: 1862 թ. օգոստոսի 4-ին «Մեղու Հայաստանին», վկայակալելով Պարզայի «Սլովո» լրագիրը, հաղորդել էր սերբ-հերցեգովինցիներին և չերնոգորցիներին չեխերի և ավստրիական սյլ սլավոնական ժողովուրդների ցույց տված համերաշխության և դրամական օգնության մասին³⁴: Սեպտեմբերի 15-ին քաղվածքներ մեջ բերվեցին «Ժուռնալ դը Սանկտ-Պետերբուրգ»-ից և Զագրեբի «Նարոդնե նովինե» լրագրից՝ սուժած չերնոգորցիների օգտին Ռուսաստանում և ամբողջ սլավոնական աշխարհում հանգանակություն սկսելու մասին³⁵: Ապստամբած հերցեգովինցիներին և թուրքական հրոսակների դեմ պատերազմող չերնոգորցիներին նյութական օժանդակության և հանգանակությունների փաստերը հուզեցին Ռուսաստանի հայ հասարակությանը, հիշեցրին նրան թուրքական կանոնավոր գերակշիռ զորամասերի գրոհները դժվարությամբ կասեցնող Ջեյթունի իր արյունակիցների ոչ պակաս աղետալի վիճակի մասին: «Կոռնկ Հայոց աշխարհի» հանդեսի 1862 թ. հոկտեմբերյան արվում տպագրվել էր «Հրավեր Ռուսաստանի հայերուն Կիլիկիայի անցքերու պատճառով»³⁶ հոդվածը: «Հրավերի» հեղինակը «Յ. Ս.» ստորագրությամբ, հիացած զեյթունցիների հերոսությամբ և տոկունությամբ, դատարկակիծով խոստովանում էր, որ նրանց անհրաժեշտ է շտապ օգնություն, քանի որ հակառակ դեպքում նրանք կորստյան են դատապարտվելու: «Մենք տեսանք ու լսեցինք,—շարունակում էր հեղինակը,—որ հենց քրիստոնեից ամենից չերմեռանդ սլաշտպանող Ռուսաստանումը ինչպես ժողովք արին ու փող հավաքեցին նույն Ասորեստանի կոտորուքումը խղճացած քրիստոնեից, նույնպես էլ Սոնթենեգրայի (Գարատաղի, Չերնոգորիայի) քրիստոնեից համար...

³¹ Г. М. Казарян. Армянское общественно-политическое движение в 50—60-х годах XIX века в России. Ереван, 1978, с. 174.

³² «Հյուսիս», 1864, № 9, էջ 69—70.

³³ Նույն տեղում, էջ 69.

³⁴ «Մեղու Հայաստանին», 1862, № 31, էջ 122.

³⁵ Նույն տեղում, № 32, էջ 142.

³⁶ «Կոռնկ Հայոց աշխարհի», 1862, № 10, էջ 778—780.

Թո՛ղ աշխարհ ամենայն վկա լինի, որ Ռուսաստանի հայերն էլ, իրենք որ քրիստոնյա Տերության հովանավորության հանգստություն և բարօրություն են վայելում, չեն մոռանում խորը Տաճկաստանում կրակի ու սրի տակ հալումաշ եղող իրանց եղբարցը»³⁷։ Ի դեպ, «Արշալույս Արարատյան» լրագիրը նշում էր, որ Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» և «Կոռնկ Հայոց աշխարհի» պարբերականները 1862 թ. ընթացքում չէին ստացվում Թուրքիայում և մասնավորապես Զմյուռնիայում³⁸։

Ըստ երևույթին, «Կոռնկի» կոչը այդպես էլ մնաց «ձայն բարբառ հանապատի»։ Արևելահայերի հասարակական նախաձեռնության վրա ներգործելու երկրորդ փորձը ձեռնարկեց «Մեղու Հայաստանին»։ 1863 թ. սկզբին լրագրում տպագրվել էր «Ղարադաղը (Զերնոգորիա) իր այժմյան վիճակում» հոդվածի կրճատված թարգմանությունը Պետերբուրգի «Иллюстрированный листок» ամսագրից³⁹։ Հոդվածում հիացմունքով էր խոսվում շերնոգորցիների խիզախության, տոկունության, իրենց փոքրիկ անպարտելի հայրենիքի հանդեպ տածած ջերմ սիրո մասին։ «Զորքինակ, ո՛վ մինչև անգամ անգետ և եվրոպական գործոց մեջ անտարբեր եղող մարդկանցից էլ այս դարումս չէ ուրախացել և զարմացել Ղարադաղոց սխրագործությունների վերա»։ Նոցա, որոնք շնայելով, որ բռնած ունին Դավաթիո մի փոքրիկ քունջը և միայն հազիվ տասն հազար հոգի զինվոր կարող են դուրս բերել իրանց մեջից, այսքան դարեր կուլում են իրանց ազատությունը պաշտպանելու համար տաճիկների դեմ, որոնց պաշտպան է Անգղիայի և Ավստրիայի արքունյաց անձնասիրությունը»⁴⁰։ Պատմելով Զերնոգորիայի վերջին դեպքերի և շերնոգորցիների սաստիկ դիմադրության մասին «Բարձրագույն Դուան բոլոր զորության դեմ, որի առաջնորդ է նրա ամենից ընտիր զորավարը Օմար փաշան», հոդվածի հեղինակը դառնություն մի խոստովանում էր, որ ռուս հասարակության մեջ տիրում է լիակատար անտարբերություն եղբայրական ժողովրդի աղետալի վիճակի և նրա հետագա ճակատագրի հանդեպ. «Ժողովուրդը Մ. Պետերբուրգ լրագիրը բաց արավ Ռուսաց մեջ ստորագրություն, որ գոնե դրամով էլ լինի, օգնություն հասնենք այս մեր ազգակից և հավատակից ազգին, և ի՞նչ եղավ հետևանքը։ Երեք ամսվան մեջ ժողովեցավ միայն 3000 մանեթ։ ... Ցավալի է շատ խոստովանիլը, որ մեր բոլոր համակրությունը երևում է միայն խոսքերի մեջ։ Թո՛ղ Ղարադաղից շնչվին տաճկաց հարվածներից, Թո՛ղ ճնշվի մի ամենից ընտիր և ազնիվ ազգայնություն մի բուռն ասիացի ամբոխի լծի տակ, որոնք, անցնելով Եվրոպա, տիրել են նորա գեղեցիկ մասնին, Թո՛ղ մահմետականաց մուսուլմանությունը ճնշե միլիոնավոր քրիստոնյաներուն»։ մենք ի բոլոր սրտե կ'ցավինք նոցա վերա և կ'երթանք տաք ջրերը մեր ցավը բժշկելու ու տրամությունը փարատելու համար»⁴¹։ Հոդվածի մեջ նշվում էր, որ շերնոգորցիներն առավել ևս ոչ մի սպասելիք չունեն եվրոպական տերություններից, որոնք կամ անտարբեր են, կամ էլ թուրքերին օգնություն և համակրություն են ցույց տալիս։ «Եվրոպական հավասարակշռության» քաղաքականությունը և քարուքանդ եղող Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումը եվրոպացի դիվանագետների համար ավելի կարևոր էր, քան հպատակ քրիստոնյա ազգերի ազատագրումը մահմեդական լծից։ «Ի՞նչ էլ լինի, վերջը այնու ամենայնիվ Ղարադաղի վիճակը արժանի է ամենայն լուսավորյալ անձնի ջերմ կարեկցության, և եթե այժմյան արքունյաց պաշտոնակատար անձանց սխալանքը և անձնասիրությունը կ'ներեն, որ այն ասպետական ցեղը կատարելապես կորցնե իր անկախությունը, այժմյան պատմությունը Ղարադաղի կ'լինի մշտնջենավոր արատ

³⁷ Նույն տեղում, էջ 779։

³⁸ «Արշալույս Արարատյան», 1862, № 678։

³⁹ «Մեղու Հայաստանի», 1863, № 3, էջ 24—25; Иллюстрированный листок, СПб., 1862, том VII, № 39, с. 300—302։

⁴⁰ «Մեղու Հայաստանի», 1863, № 3, էջ 24։

⁴¹ Նույն տեղում, էջ 25։

Եվրոպայի քաղաքականության վերա»⁴², «Иллюстрированный листок»-ից արտատպված հոդվածի շարունակությունը, որտեղ տրվում էր Չերնոգորիայի համառոտ պատմությունը, հայ լրագրի խմբագրությունը «ավելորդ համարեց թարգմանել»:

Մենք դիտավորյալ կերպով մեջ բերեցինք այդչափ ընդարձակ քաղվածքներ ռուսական ամսագրից: Նման հոդվածի հրապարակումը հայ լրագրում վկայում է շերնոգորցիների ազատագրական շարժման լիակատար ստարման մասին հայ հասարակայնության կողմից, նրա անկեղծ համակրանքի՝ եղբայրական ժողովրդի ծանր վիճակի հանդեպ: Թարգմանությունը հաջորդող անստորագիր (ըստ երևույթին, խմբագրական) ընդարձակ դիմումը ամբողջությամբ ձայնակցում է ռուս հոդվածագրի մտորումներին, այն կառուցված է տառապող շերնոգորցիների նկատմամբ ռուս հասարակության և արևելահայերի՝ Զեյթունի իրենց պայքարող հայրենակիցների նկատմամբ վերաբերմունքի զուգահեռական վրա. «Ուշադրությամբ կարդացե՛ք այս հոդվածը, սիրելի ռուսիաբնակ հայեր, և տեսե՛ք, թե գրողը որքան ցավում է իր հայրենակիցների այժմյան ընթացքի վերա և նրանց հանդիմանում, որ նոցա մեջ քիչ է թե՛ քաղաքական համակրություն դեպի ճնշյալ քրիստոնյա ազգերը և թե՛ մարդկային ու քրիստոնեական ցավակցություն դեպի նոքա, որոնք նեղության, վշտի և տառապանքի մեջ են, հանգամանքների բերմունքից: Կատարելապես իրավունք ունենալով պարոնը ցավելու իր եղբարց վերա և հանդիմանելու նրանց, որոնք, իրանք հանգստության և բարօրության մեջ գտնվելով, բնավին ցավակցություն և համակրություն չեն ցույց տալիս դեպի նրանց տառապյալ հավատակից եղբայրները, որոնք այսքան դարեր ամենատեսակ նեղությանց և զրկանքների համբերելով տաճիկներից, չնայելով իրանց շնչին թվին, համեմատելով թշնամիների հետ, պահպանել են իրանց քրիստոնեական կրոնը ու անկախ ազդայնությունը, միայն իրանց անընկճելի ոգովը»⁴³: Սրան հաջորդում էր այն հիմնական դադափարը, հանուն որի և լրագրում զետեղվել էր Չերնոգորիայի մասին հոդվածը. «Սիրելի հայ եղբայրներ, ահա նույն հանգամանքն է և ձեր աչքի առջև: Երանի մեզ էլ չվիճակվեր նախախնամությունը նույն խոսքերն ասելու մեր ազգային եղբարցը: Նույն հանգամանքն է ձեր առջև, ասում եմ, որովհետև ինչպես Եվրոպական Տաճկաստանի մեջ դարադաղցիներն են, նույնը են Ասիայի մեջ մեր արենակից եղբայրները՝ զեյթունցիք, որոնք նմանապես ահա մոտ 500 տարի է, մեր տերության վերջանալից հետ, Կիլիկիայի լեռներում ամրացած, անընկճելի ոգով, և անձնանվեր հաստատամտությամբ պահպանում են իրանց հայրենի կրոնը, լեզուն, անկախությունը, պատերազմելով շարունակ այսքան դարեր զանազան բարբարոս ազգերի դեմ: Սոքա ավելի բարձր են մեր աչքում (ոչ թե նորա համար, որ հայ են) դարադաղցիներից, որովհետև վերջինները էլի պատած են քրիստոնյա ազգերով ու գտնվում են Եվրոպայի մեջ, որի ազգերից միշտ էլի օգնության հույս ունեցել են, թեև շարունակապես նրանցից նպաստ չեն գտած: Իսկ զեյթունցիք, խեղճ զեյթունցիք, բոլորովին բաժանած քրիստոնյա և մարդասեր ազգերից, պատած են եղել և են զանազան բարբարոս մահմետական ցեղերից, որոնց մոլեռանդությունը շատ երկիրներ անապատ դարձրել է, նոցա քրիստոնյա ազգերուն կամ բնաջինջ առնելով հափշտակությամբ, սպանությամբ և իրանց կրոնը դարձնելով և կամ մարդկության կարգից դուրս հանելով նրանց ու անբան արարածների հավասարելով ստրկությամբ»⁴⁴: Հեղինակը կրթոտ կոչ է անում Ռուսաստանի հայերին՝ գործի դնել բոլոր ջանքերը Զեյթունի հերոսական պաշտպաններին նյութական օգնություն ցույց տալու համար, փրկել «մեր ահա այս փոքրիկ անկախ մնացորդը», ցույց տալ աշխարհին, որ հայերի սրտերում դեռ չի սառել նախնիների տաք արյունը: Նա հույս է հայտ-

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում, էջ 261:

նում, որ հայրենակիցները արձագանքելու են իր այս կոչին հանուն ապագա սերունդների և որ «մենք էլ ազատ կամանք նույն պաշտոնը վարելից ու նույն խոսքերը կրկնելից մեր հայրենակիցների դեմ, ինչ որ ստիպվել է ասելու վերահիշյալ ռուսներին հողավածի գրողը իր եղբարցը, սոցա ցույց տված սառնասրտությունը համար դեպի իրանց հավատակից թշվառ ղարաղաղցիքը»։ Յավոք, այս կոչը ունեցավ նույն ճակատագիրը, ինչ որ «Կոռնկ Հայոց Աշխարհի»-ի հրավերը, այսինքն, մնաց անպատասխան։ Մեր կարծիքով, այդչափ անտարբեր վերաբերմունքի պատճառն այն էր, որ այն ժամանակվա հալ իրականության մեջ ազատասիրական գաղափարախոսությունը դեռևս չէր գցել խորը արմատներ, չկար անկախության համար զինված պայքարի անհրաժեշտության գիտակցություն։ Հենց 1862 թ. Զեյթունի ապստամբությունը դարձավ այն բեկումնային, վճռական իրադարձությունը, որից հետո անիծված թուրքական լծի դեմ սերբերի, հույների, բուլղարների, չերոգորցիների, ռումիների հետ միասին պայքարի ելան Սասունի ու Վանի, Մուշի ու Կարինի հայերը։ Հայկական լրագրի այս հրապարակումը նշանակալից է նաև նրանով, որ հայ պարբերական մամուլում առաջին անգամ ուղղակի կոչ հնչեց՝ պաշտպանել բալկանյան ժողովուրդների ազատասիրական ձրդությունները և նրանց օրինակին հետևել։

Հարավսլավացի պատմաբան Բ. Պավիչևիչը չերոգորա-թուրքական պատերազմին նվիրված իր մենագրության մեջ նշում է, որ «1861 և 1862 թթ. ապստամբությունը Հերցեգովինայում ըստ էության այն իրադարձությունների զլխավոր փորձն էր, որոնք ծավալվեցին այս կողմերում տասնչորս տարի անց»⁴⁵։ Նույն կերպով կարելի է բնութագրել նաև հայ ազգային-ազատագրական շարժման վերելքը և Զեյթունի ապստամբությունը։ Իհարկե, խոսելով սերբ ժողովրդի ազատագրական շարժման նկատմամբ հայ հասարակական կարծիքի և առաջին հերթին XIX դարի 90-ական թթ. սկզբի պարբերական մամուլի վերաբերմունքի մասին, պետք չէ հեռուն գնացող եզրակացություններ անել այդ պայքարի նպատակների և խնդիրների անվերապահ պաշտպանության վերաբերյալ, նամանավանդ որ վերը ներկայացված նյութերը արտահայտում էին միայն արևելահայ հասարակության տեսակետը։ Զի կարելի նաև հաշվի չառնել ռուս պաշտոնական քաղաքականության և ռուսական պարբերական մամուլի դիրքերը։ Նրանց մեծամասնությունը բարյացակամորեն էր տրամադրված իրենց բալկանյան ցեղակիցների գործողությունների նկատմամբ, ինչը չէր կարող իր ազդեցությունը չունենալ հայկական մամուլի վրա։ Հայկական մամուլի օրգանները իրենց տրամադրության տակ շունեին բավական ինֆորմացիա իրադարձությունների մասին, սակայն ձգտում էին իրենց ընթերցողներին ներկայացնել պատմական, աշխարհագրական տեղեկություններ Սերբիայի և Չերոգորիայի մասին, տալ իրենց մատչելի ինֆորմացիայի առավելագույնը։ Այսպիսով, սկիզբը դրված էր, հարավսլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը թուրք հարստահարիչների դեմ գրավում է իր մշտական տեղը հայ պարբերական մամուլի էջերում, սկսում է ընկալվել իբրև իր սեփականը, և արդեն մի քանի տարի անց, Արևելյան հարցի նոր սրման ժամանակաշրջանում (1875—78 թթ.) և ավելի ուշ, 1880—90-ական թթ., հայ ընթերցողի վրա թափվում է բալկանյան ժողովուրդների մասին հրապարակումների, գեղարվեստական և պատմագիտական գրականության թարգմանությունների հեղեղը։ Հայ հասարակական գործիչները բացահայտորեն կոչում են հետևել հույների, սերբերի, բուլղարների, չերոգորցիների օրինակին, զենքը ձեռքին թոթափել ատելի թուրքական լուծը։

⁴⁵ Б. Павићевич. Црна Гора у рату 1862. Београд, 1963, с. 55.

АРМЯНСКАЯ ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ О НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОМ ДВИЖЕНИИ СЕРБСКОГО НАРОДА
(Начало 60-х годов XIX века)

А. А. ОВАКИМЯН

Резюме

Национально-освободительная борьба сербов и черногорцев получила широкий и непосредственный отклик на страницах армянской периодической печати. Сообщения о восстании в Герцеговине, черногорско-турецкой войне, бомбардировке Белграда составляли в начале 60-х гг. XIX в. значительную долю внешнеполитических комментариев газет «Мегу Айастан» (Тифлис) и «Париз» (Париж), недвусмысленно указывали, на чьей стороне симпатии армянского народа и чьему примеру он должен следовать. Журнал «Масяц Ахавни» (Феодосия) впервые в армянской действительности опубликовал очерк о Сербии и сербах, дал описание Белградской крепости. В армянской периодической печати того времени армянские повстанцы в Зейтуне не раз сравнивались с черногорцами. Кроме того, следуя примеру русских печатных органов, объявивших сбор средств в пользу черногорцев, журнал «Крунк Айоц Ашхари» (Тифлис) и «Мегу Айастан» выступили со сходной инициативой об оказании материальной помощи героическим защитникам Зейтуна.